ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

„20" 01 2022 թ.
№ 23/07-05/1227

ք. Երևան, Տերյան փող., 44, հեռ՝ (+374 11) 518 401
էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«Ստրոի Գրուպ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությանը
/ք. Երևան, Զավարյան փ. 29/25/

ԾԱՆՈՒՑՈՒՄ

/պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ/

Երևանի քաղաքապետարանի և «Ստրոի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի հունիսի28-ին կնքվել է հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/25 կապիտալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր /այսուհետ՝ նաև Պայմանագիր/, որի 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի Պայմանագրի N 1 հավելվածով՝ շավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի շենքերի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե կապալառուն ժամանակին չի սկսում

աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը(ներառյալ օրացուցային գրաֆիկը), կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվարկային փաստաթղթերով սահմանված պահանջներին, խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ստրոի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ընդհանրապես թերի է կատարվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 կետով, միակողմանի լուծում է «Ստրոի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2021 թվականի հունիսի28-ին կնքված հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/25 կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը:

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Իրավաբանականբաժին,
Կատարող՝ Ա. Մարտիրոսյան
☎ 011-518-419 E-Mail: kentronirav@mail.ru